ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԵՐՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Վերնաշեն հեռ. 0281 2-44-07 № 43 « 17 » « 07 » 2013 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
պարոն Է. Ղազարյանին

Ձեզ ենք ներկայացնում Վերնաշենի համայնքի ժողովի 13 հուլիսի 2013թ թիվ 2 արձանագրությունը
Առդիր 2 թերթ

Վերնաշենի համայնքի ղեկավար Մ. Բաղդասարյան

Արձանագրություն թիվ 2

13 հուլիսի 2013թ տեղի ունեցավ Վերնաշենի համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում են համայնքի 128 անդամներ:
Ժողովը վարում է համայնքի ղեկավար Մ. Բաղդասարյանը:

Օրակարգը

1. 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների և իրականացվող ծրագրերի մասին

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների և 2013թ իրականացվող ծրագրերի մասին համառոտ ներկայացրեց համայնքի ղեկավար Մ. Բաղդասարյանը
2013 թվականի առաջին կիսամյակում հողի հարկի պլանը կատարվել է 55%-ով, գույքահարկը 47%-ով, հողի վարձավճարը 47%-ով, տեղական տուրքը 22%-ով , խմելու ջրի սպասարկման վճարը 33 %-ով:
2013 թվականի ընթացքում համայնքում կատարվել են խմելու ջրի ակունքների մաքրում, մասնակի վերանորգման աշխատանքներ:
Կատարվել են ներհամայնքային ճանապարհների վերանորոգում :
Համայնքում կատարվել են աղբահանության աշխատանքներ:
Նախատեսվում է ընթացիկ տարվա ընթացքում կատարել համայնքի վարչական շենքի տանիքի վերանորոգում, կուլտուրայի տան վերանորոգում, խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի վորանորգում:

Ելույթ ունեցան համայնքի անդամներ Ք. Մկրտչյանը, Ա. Արամյանը, Ա. Մովսիսյանը Կ.Կարապետյանը , Ա. Մուրադյանը Ա. Մուրադյանը և ուրիշները:

Առաջարկեցին 2013թվականի ընթացքում կատարել հանդամիջյան ճանապարհների վերանորոգում, քանի որ ճանապարհները գտնվում են շատ անմխիթար վիճակում, որը խանգարում է գյուղատնտեսական աշխատանքներին:

Համայնքի ժողովը որոշեց

1. 2013թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքները ընդունել ի գիտություն
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝
   ա/ Կատարել խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի վերանորոգում
   բ/ կատարել հանդամիջյան ճանապարհների վերանորոգում:

Վերնաշենի համայնքի
ղեկավար՝ Մ. Բաղդասարյան